

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2012 թվականի դեկտեմբերի 19

թիվ 29

քաղ. Մոսկվա

Շուկան որպես անդրսահմանային որակելու չափորոշիչները հաստատելու մասին

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհուրդը՝ պետությունների ղեկավարների մակարդակով, **որոշեց**.

հաստատել շուկան որպես անդրսահմանային որակելու չափորոշիչները (կից ներկայացված են):

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի անդամներ՝

**Բելառուսի Հանրապետության
կողմից**

**Ղազախստանի
Հանրապետության**

**Ռուսաստանի Դաշնության
կողմից**

Ա. Լուկաշենկո

Ն. Նազարբաև

Վ. Պուտին

Եվրասիական տնտեսական բարձրագույն
խորհրդի 2012 թվականի դեկտեմբերի 19
–ի թիվ 29 որոշմամբ

Շուկան անդրսահմանային համարելու չափորոշիչները

1. Սույն Չափորոշիչները մշակված են 2010 թվականի դեկտեմբերի 9–ի «Մրցակցության միասնական սկզբունքների ու կանոնների մասին» համաձայնագրի 1–ին հոդվածի 3–րդ մասի հիման վրա (այսուհետ՝ Համաձայնագիր) և Համաձայնագրի 15–րդ հոդվածի համաձայն՝ կիրառվում են Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների կողմից (այսուհետ՝ Կողմեր) խախտումների կանխարգելման հարցում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի իրավասությունները որոշելու նպատակներով:

2. Շուկան համաձայնագրի III բաժնով սահմանված մրցակցության միասնական կանոնները կիրառելու նպատակով որակվում է որպես անդրսահմանային, եթե ապրանքային շուկայի աշխարհագրական սահմանները ներառում են երկու կամ ավելի Կողմերի տարածքները:

3. Կողմերի տնտեսավարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) կողմից Համաձայնագրի 13–րդ հոդվածով սահմանված արգելքների խախտումների կանխարգելումն* իրականացվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից, եթե կատարվում է հետևյալ պայմանը՝

տնտեսավարող սուբյեկտը, որի գործողությունները խախտում են սահմանված արգելքը, և մրցակից (մրցակիցներ) տնտեսավարող սուբյեկտը (տնտեսավարող սուբյեկտները), որը (որոնք) նման գործողությունների կատարման հետևանքով կրել է կամ կարող է կորուստ կրել կամ որի գործարար համբավին հասցվել է կամ կարող է վնաս հասցվել, գրանցված են տարբեր Կողմերի տարածքներում:

4. Կողմերի տնտեսավարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) կողմից Համաձայնագրի 10–րդ հոդվածով սահմանված արգելքների խախտումների կանխարգելումն

* Սույն Չափորոշիչների դրույթները, որոնք վերաբերում են տնտեսավարող սուբյեկտներին (շուկայի սուբյեկտներին), կիրառվում են նաև անձանց խմբերի պարագայում:

իրականացվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից, եթե կատարվում է հետևյալ պայմանը՝

առնվազն երկու տնտեսավարող սուբյեկտներ (շուկայի սուբյեկտներ), որոնց գործողությունները հանգեցնում են կամ կարող են հանգեցնել արգելքի խախտման, գրանցված են տարբեր Կողմերի տարածքներում:

5. Կողմերի տնտեսավարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) կողմից Համաձայնագրի 12 -րդ հոդվածով սահմանված արգելքների խախտումների կանխարգելումն իրականացվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից, եթե համակցված կերպով կատարվում են հետևյալ պայմանները.

խախտման հետևանքով ազդեցություն կրած յուրաքանչյուր Կողմի տարածքում շրջանառվող ապրանքի ընդհանուր ծավալում այն տնտեսավարող սուբյեկտի իրացման կամ գնման ծավալի մասնաբաժինը, որը գերիշխող դիրք է զբաղեցնում սույն Չափորոշիչների 2-րդ կետով սահմանված չափորոշիչներին համապատասխանող ապրանքային շուկայում, և որի գործողությունները հանգեցնում են սահմանված արգելքի խախտման, պետք է կազմի առնվազն 35 տոկոս,

արգելքի խախտումը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել սույն Չափորոշիչների 2-րդ կետով սահմանված չափորոշիչներին համապատասխանող ապրանքային շուկայում մրցակցության արգելման, սահմանափակման, վերացման կամ այլ անձանց շահերի ոտնահարման՝ երկու կամ ավելի Կողմերի տարածքներում,

կամ

խախտման հետևանքով ազդեցություն կրած յուրաքանչյուր Կողմի տարածքում շրջանառվող ապրանքի ընդհանուր ծավալում այն մի խումբ տնտեսավարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) իրացման կամ գնման ծավալի ընդհանուր մասնաբաժինը, որոնցից յուրաքանչյուրը սույն Չափորոշիչների 2-րդ կետով սահմանված չափորոշիչներին համապատասխանող ապրանքային շուկայում զբաղեցնում է գերիշխող դիրք, և որոնց գործողությունները հանգեցնում են սահմանված արգելքի խախտման, երեքից ոչ ավելի տնտեսավարող սուբյեկտների համար կազմում է առնվազն 50 տոկոս, կամ չորսից ոչ ավելի տնտեսավարող սուբյեկտների (շուկայի սուբյեկտների) համար առնվազն 70 տոկոս (սույն Կանոնակարգը չի կիրառվում, եթե Կողմերից յուրաքանչյուրի տարածքում նշված տնտեսավարող սուբյեկտներից թեկուզ մեկի մասնաբաժինը 15 տոկոսից պակաս է),

երկարատև ժամանակահատվածի ընթացքում (առնվազն մեկ տարվա ընթացքում կամ, եթե այդպիսի ժամկետը մեկ տարուց պակաս է, համապատասխան ապրանքային շուկայի գոյության ժամկետի ընթացքում) տնտեսավարող սուբյեկտների մասնաբաժինների հարաբերական չափերն անփոփոխ են կամ ենթակա են աննշան փոփոխությունների, ինչպես նաև նոր մրցակիցների մուտքը ապրանքային շուկա դժվարեցված է,

սպառման դեպքում՝ տնտեսավարող սուբյեկտի կողմից իրացվող կամ ձեռք բերվող ապրանքը չի կարող փոխարինվել այլ ապրանքով (այդ թվում՝ արտադրական նպատակներով օգտագործման դեպքում), ապրանքի գնի աճով պայմանավորված չէ այդ ապրանքի պահանջարկի նվազումը՝ համապատասխան այդպիսի աճին, համապատասխան ապրանքային շուկայում այդ ապրանքի գնի, իրացման կամ ձեռքբերման պայմանների մասին տեղեկությունները հասանելի են անձանց անորոշ շրջանակի,

արգելքի խախտումը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել սույն Չափորոշիչների 2-րդ կետով սահմանված չափորոշիչներին համապատասխան՝ ապրանքային շուկայում մրցակցության արգելմանը, սահմանափակմանը, վերացմանը կամ այլ անձանց շահերի ոտնահարմանը՝ երկու կամ ավելի Կողմերի տարածքներում:

6. Սույն Չափորոշիչները կիրառվում են բնական մենաշնորհների սուբյեկտների նկատմամբ՝ հաշվի առնելով Կողմերի բնական մենաշնորհներին վերաբերող համաձայնագրերով, այդ թվում՝ ոլորտային նշանակություն ունեցող (ճյուղային) համաձայնագրերով սահմանված առանձնահատկությունները:
